ՆՊԱՏԱԿԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԱՆՀԱՏԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԻՉՆԵՐ

ՄՈՎՍԵՍ ԴԵՄԻՐՃՅԱՆ

Փիլիսոփայության էության հետ կապված ամենաքննարկվող հիմնահարցերից մեկը վերաբերում է այն բանին, թե կարելի է արդյոք փիլիսոփայությունը համարել գիտություն, և որքանով փիլիսոփայական գիտելիքը կարող է արտացոլել օբյեկտիվ իրականության օրենքներն ու օրինաչափությունները: Հիմնական «մեղադրանքը» այն է, որ փիլիսոփայական գիտելիքը **աշխարհայացքային** բնույթի է[1], հետևաբար՝ վերաբերում է մարդուն և նրա սուբյեկտիվ իրականությանը: Թերևս այս հանգամանքն է պատճառը, որ, ինչպես գրում է 20-րդ դարի ամենանշանավոր փիլիսոփաներից մեկը՝ Մ. Հայդեգերը, «Փիլիսոփայությունը հանդես է գալիս որպես գիտություն՝ չլինելով այդպիսին»[2]:

Մյուս կողմից, սակայն, կարելի է ասել, որ փիլիսոփայության և գիտության տարբերությունը ճանաչողության մեթոդն է, և ոչ թե վերջնարդյունքը, և հենց շնորհիվ փիլիսոփայության մետաֆիզիկական և դիալեկտիկական մեթոդների կիրառման է հնարավոր եղել արձանագրել և ուսումնասիրել գիտական իմացությանը չտրվող երևույթներ: Դրա ապացույցները փիլիսոփայության մեջ բազմաթիվ են՝ դիալեկտիկայի և տրամաբանական մտածողության օրենքները, կեցության մասին ուսմունքը, մարդու էական հատկանիշների՝ բանականության, ստեղծագործելու ունակության և այլնի բացահայտումը, մարդու բնական և սոցիալական էությունների մասին ուսմունքը, բարդ համակարգերի ինքնակազմակերպման օրինաչափությունները և այլն:

Եթե գիտական գիտելիքը ձևավորվում է օբյեկտիվ իրականությունում անընդհատ կրկնվող փաստերի (դեպքերի, իրադարձությունների, գործընթացների) ընդհանրացման և դրա միջոցով այդ կրկնության հիմքում ընկած օրենքի կամ օրինաչափության բացահայտման հիման վրա, ապա փիլիսոփայական գիտելիքը նույնպես արձանագրում է, մի կողմից, աշխարհի ամենաընդհանուր և հիմնական օրինաչափությունները, մյուս կողմից՝ այդ աշխարհում մարդու և նրա գոյությամբ պայմանավորված «երկրորդային» կեցության՝ սոցիալ-մշակութային իրա-

[1] Տե՛ս **Рахматуллин Р. Ю.** Является ли философия наукой? // "Молодой ученый", 2014, № 3, էջ 1100-1103. URL https://moluch.ru/archive/62/9259/ (հղման ամսաթիվ՝ 11.04.2019):

[2] **Хайдеггер М.** Время и бытие. М.: "Республика", 1993, с. 335.

կանության գործառության ընդհանուր օրինաչափությունները:

Սա իր հերթին ցույց է տալիս փիլիսոփայական և գիտական գիտելիքի տարբերություններից մեկը: Եթե փիլիսոփայական գիտելիքն առավելապես ոչ զգայելի և միայն մտածելի երևույթների մասին է, ապա իրականության գիտական արտացոլումն արձանագրում է դրանց դրսևորումները օբյեկտիվ օրենքների և օրինաչափությունների տեսքով՝ մարդուն առավել անմիջականորեն տրված իրականության մակարդակում:[3]

Օրինակ, ճանաչողության սուբյեկտի և օբյեկտի մետաֆիզիկական հակադրության կանտյան հաղթահարման հիման վրա միայն հնարավոր եղավ հետագայում քվանտային մեխանիկայի շրջանակներում ձևակերպել այն դրույթը, որ դիտարկողն անխուսափելիորեն ազդում է դիտարկման օբյեկտի վրա: «Մենք պետք է հիշենք, որ այն, ինչ դիտարկում ենք, ոչ թե բնությունն է ինքնին, այլ այն բնությունը, որը հանդես է գալիս՝ կախված մեր հարցադրման ձևից»[4]: Դա թույլ է տալիս ասել, որ աշխարհի, դրա շարունակականության ապահովման և այլ օրինաչափությունների վերաբերյալ գիտելիքը տրվում է հենց փիլիսոփայական մտածողության շրջանակներում:

Բայց սրանով չի սպառվում աշխարհի փիլիսոփայական ճանաչման յուրահատկությունը: Այն իր շարունակությունն է ստանում մարդու հետ այդ գիտելիքի առնչությունների բացահայտումներում՝ անհատի և առհասարակ մարդկության զարգացման վրա գիտելիքի՝ ազդելու ներուժի բացահայտման գործառույթում: «Առավելապես փիլիսոփայական մակարդակում է գիտելիքը մարդկայնանում, իմացաբանականից բացի՝ ներկայանում նաև իբրև սոցիալ-բարոյական արժեք, վերածվում իմաստության: Գիտելիքը դեռ իմաստություն չէ, նույնիսկ՝ ոչ գլխավորապես իմաստություն: Եթե հին աշխարհում գիտելիքը բարիք էր ենթադրում, իսկ բարիքը՝ գիտելիք, ինչպես կպնդեր Սոկրատեսը, իսկ Ֆ. - Բեկոնի դարաշրջանում գիտելիքը դեռ անվերապահորեն շարունակում էր ուժ, զորություն համարվել, ապա նոր դարաշրջանի մեծագույն մտածող Ի. Կանտն արդեն էապես տարբերակեց գիտելիքը բարիքից ու զորությունից, դրանով իսկ իմաստությունից՝ գտնելով, որ իմաստությունը տրված է շատ ավելի բարոյականի մեջ, քան թե գիտելիքում: Այն տրված է բարոյականի մեջ որպես համամարդկային արժեք: Այստեղ է միայն, որ գիտելիքը կարող է մարդարար լինել, մասը կազմել իմաստության»[5]:

Որքանով փիլիսոփայական գիտելիքն առնչվում է մարդաբանական հարցերին, այնքանով նրա խնդրակարգում ավելի մեծ տեղ է զբա-

---

[3] Տե՛ս **Предеина М. Ю.** Закон науки как репрезентант закона бытия // "Вестник ЧГУ". Философия. Социология. Культурология, № 22 (276), էջ 73-75:

[4] **Гейзенберг В.** Физика и философия. М., 1963.

[5] **Հր. Շաքարյան**, Փիլիսոփայություն, Եր., 2005, էջ 12:

ղեցնում «կեցություն» հասկացությունը, որն ուղեկցում է փիլիսոփայական մտքի զարգացումը սկզբնավորման շրջանից մինչև մեր օրեր: Դժվար է պատկերացնել փիլիսոփայական ազդեցիկ որևէ ուղղություն կամ ուսմունք, որը կարողանա զերծ մնալ «կեցություն» հասկացությանը դիմելուց: Այն փիլիսոփայական ուսմունքներում ստացել է խիստ տարբեր մեկնաբանություններ, որոնց մեջ ընդհանուր է, թերևս, այն պատկերացումը, որ «կեցությունն այն է, ինչ ընկած է զգայական իրերի հետևում»[6]: Պարզ է՝ ասվածը վերաբերում է նրան, որ առարկայական-զգայելի աշխարհի հիմքում կան ինչ-որ երևույթներ, որոնք երաշխավորում են այդ աշխարհի գոյությունը, և դրանք ոչ թե զգայելի, այլ միայն մտածելի երևույթներ են: Դեռ ավելին, այդ երևույթները կայուն են, որովհետև ապահովում են աշխարհի շարունակականությունը և «իրերի» կրկնությունը: Հետևաբար կարելի է ասել, որ, օրինակ, կյանքի կազմակերպման տարբեր՝ անօրգանական, օրգանական և սոցիալական մակարդակներում կեցությունը դրսևորվում է այս կամ այն օրենքի կամ օրինաչափության տեսքով:

Այդպես, անօրգանական աշխարհն ապրում է **անհրաժեշտության** օրենքի համաձայն, ըստ որի՝ այն ամենը, ինչ լինում է այդ մակարդակում, տեղի է ունենում, որովհետև չի կարող տեղի չունենալ[7]: Պարզ է, որ խոսքը ֆիզիկական երևույթների մասին է, որոնք ընթանում են պատճառահետևանքային հստակ կապերի շրջանակներում և խիստ դետերմինավորված են:

Երկրորդ մակարդակը՝ օրգանականը, ենթարկվում է **նպատակահարմարության** օրենքին, որը երկար ժամանակ մեկնաբանվում էր մետաֆիզիկական նպատակի կամ գերբնական իդեալի (Աստծո) ենթադրյալ գոյության համատեքստում: Մինչդեռ բնագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ օրգանական աշխարհի նպատակահարմարությունն ունի բնական ծագում և պետք է քննարկվի կենսաբանական աշխարհում հարմարվողականության հատկության հետ փոխկապակցված[8]:

Ասվածը փիլիսոփայական առումով առնվազն երկու կարևոր եզրակացություններ անելու հնարավորություն է տալիս: Նախ այն, որ ակնհայտ է կյանքի կազմակերպման կամ կեցության տարբեր մակարդակներում գործող ընդհանուր սկզբունքի փոփոխության հանգամանքը, ինչը նշանակում է, որ դժվար թե ռացիոնալ է խոսել ողջ իրականության համար պարտադիր մետաֆիզիկական (թելեոլոգիական) կամ գերբնական (թեոլոգիական) որևէ ընդհանուր օրենքի (կանոնի, նպատակի, սկզբունքի, բարոյական նորմի) մասին: Երկրորդ հանգամանքն

---

[6] **Парменид** // Большая советская энциклопедия: 3-е изд. М.: "Советская энциклопедия", 1969-1978.

[7] Տե՛ս **Левин Г. Д.** Необходимость и случайность // Новая философская энциклопедия. М.: "Мысль", 2000:

[8] Տե՛ս **Фролов И. Т.** Проблема целесообразности в свете современной науки. М., 1971:

այն է, որ նպատակահարմարության օրենքն արտահայտվում է նաև կյանքի կազմակերպման ավելի բարդ՝ սոցիալական ոլորտում, օրինակ, հին կարգերի մոռացման և նորերի ընդունման տեսքով, սակայն չի կարող պայմանավորել մարդու ողջ գործունեությունը:

Սոցիալական կեցության մեջ այդ բացը լրացնում է **նպատակադրության** սկզբունքը, որն առհասարակ մարդու գիտակցված գործունեության գլխավոր բնութագրիչն է: «Պատճառականության օրինաչափության կամ ավելի լայն իմաստով՝ դետերմինիզմի կրեատիվ զորությամբ է օրգանական նյութի շրջանակներում միլիարդավոր տարիների ընթացքում կազմավորվել կենդանի բնության այն հավասարակշիռ ու ներդաշնակ զարգացումը, որը հայտնի է նպատակահարմարություն անվամբ: Իմաստության հասնող այդ օրինաչափության հենքի վրա մարդու առաջացումով է ձևավորվել դետերմինիզմի դրսևորման մի նոր ձև՝ նպատակադրությունը»[9]:

Թեև նպատակը որպես այդպիսին գոյություն ունի միայն մարդու գիտակցության մեջ, այն կարող է փոփոխություններ մտցնել ֆիզիկական և սոցիալական իրականություններում՝ ինքնաիրացման համար ստեղծելով անհրաժեշտ պայմաններ: Սրանով նպատակադրված գործունեությունը սկզբունքորեն տարբերվում է նպատակահարմարությունից, որի դեպքում ապագան բխում է եղած պայմաններից, միչդեռ նպատակադրության պարագայում գործ ունենք այն իրողության հետ, որ նպատակը (ապագան) հետադարձ կապով ներկայում ստեղծում է ինքնաիրացման համար անհրաժեշտ պայմանները: Երկրորդ տարբերությունն այն է, որ նպատակահարմարության դեպքում, փաստորեն, ապագան հարմարեցվում է ներկա իրավիճակին, մինչդեռ նպատակադրության դեպքում գործ ունենք միանգամայն նոր՝ ներկայի հետ չհամընկնող ապագա կառուցարկելու հետ: Եվ, վերջապես, երրորդ տարբերությունը վերաբերում է նրան, որ նպատակահարմարությունը տարածված է օրգանական աշխարհում այն պատճառով, որ հանդես է գալիս որպես **գոյատևման ռազմավարություն**: «Փոխադարձ կապի մեխանիզմների առկայության կարելի է հանդիպել ակտիվ հարմարվողականության ցանկացած գործընթացում, որը կապված է համակարգի կառուցվածքային և գործառական հատկությունների փոփոխման արդյունավետ տարբերակի ընտրության հետ: Քանի որ փոխադարձ կապի մեխանիզմների օգնությամբ իրականացվում է միջավայրի այս կամ այն պայմաններին համակարգի հարմարվողականությունը, ուրեմն գործ ունենք նպատակահարմարության հետ: Նման համակարգերում տեղի է ունենում գործունեության արդյունքների և դրանք ապահովող գործընթացների համապատասխանեցում»[10]: Մինչդեռ նպատակադ-

---

[9] **Հր. Շաքարյան**, նշվ. աշխ., էջ 95:

[10] **Карако П. С.** Детерминизм и целевая причина в системе современного научного знания. // "Вестник Полесского государственного университета". Серия общественных и

րության պարագայում, որպես կանոն, խնդիր է դրվում ստեղծել նոր իրականություն, որը կլինի ոչ թե ներկայի բնականոն շարունակությունը, այլ դիալեկտիկական հաղթահարումը:

Ըստ այդմ՝ սոցիալական կեցությանը բնորոշ յուրահատկություններից մեկն այն է, որ կյանքի կազմակերպման նախորդ ձևերի՝ անօրգանական և օրգանական մակարդակներին հատուկ օրենքները՝ անհրաժեշտությունը և նպատակահարմարությունը, այսպես թե այնպես ներթափանցում են սոցիալական ոլորտ և դիմադրության չհանդիպելու դեպքում կարող են դառնալ մարդկային հարաբերությունները կարգավորող գլխավոր գործոնները: Այլ կերպ ասած, եթե մարդու անհատական և սոցիալական կյանքի հիմքում չի դրվում նպատակադրության սկզբունքը, ապա հասարակական հարաբերությունները սկսում են ընթանալ համաձայն նպատակահարմարության օրենքի: Օրինակ, սոցիալական հիմնահարցերը իմաստավորվում են՝ հաշվի առնելով ոչ թե հասարակական համակարգի հետագա զարգացման տրամաբանությունը, այլ այս պահին առկա պայմանները: Այսինքն, եթե նպատակադրության դեպքում նպատակն է ստեղծում իր իրականացման պայմանները, ապա նպատակահարմարության դեպքում պայմաններն են թելադրում, թե ինչ նպատակներ դրվեն և իրացվեն:

Միևնույն ժամանակ հարկ է փաստել, որ կյանքի կազմակերպման բոլոր երեք մակարդակներին հատուկ օրենքները՝ անհրաժեշտությունը, նպատակահարմարությունը և նպատակադրությունը, իրենց արտահայտությունն ունեն սոցիալական հարաբերությունների տարբեր մակարդակներում և ոլորտներում՝ հանդես գալով միասին կամ առաջացնելով հակասություններ՝ կախված այս կամ այն ոլորտի յուրահատկություններից, առկա պայմաններից և այլ գործոններից: Օրինակ, այն, ինչ անհրաժեշտ է տնտեսական հարաբերությունների զարգացման տեսանկյունից, կարող է նպատակահարմար չլինել քաղաքական առումով և այլն[11]:

Հասարակական կեցությանը բնորոշ այս յուրահատկությունները պայմանավորված են նրանով, որ կեցության մինչսոցիալական դրսևորումներում իշխող **պատճառ-հետևանք** հարաբերությունը մարդկային գործունեության դեպքում դրսևորվում է **պատճառ-նպատակ** կապի տեսքով, ինչը պայմանականորեն կարելի է անվանել «հետևանքի սուբյեկտիվացում»: Հետևաբար կարելի է խոսել այն մասին, որ բնության պարագայում իրերի գենետիկ դետերմինավորումը սոցիալական մակարդակում վերածվում է նպատակային դետերմինացիայի: Օրինակ, եթե կենդանական աշխարհում շրջակա միջավայրի ուսումնասիրութ-

---

гуманитарных наук. 2009, № 1, с. 11-12. URL: https://cyberleninka.ru/article/n/determinizm-i-tselevaya-prichina-v-sisteme-sovremennogo-nauchnogo-znaniya (հղման ամսաթիվ՝ 13.04.2019).

[11] Այդ մասին տե՛ս **Է. Հարությունյան,** Անցումային հասարակությունը որպես տրանսֆորմացիոն գործունեության համակարգ, Եր., 2000, էջ 198-219:

յունն ունի գենետիկ դետերմինավորում, ապա մարդու դեպքում իրականության ճանաչողությունը նպատակային գործունեություն է:

Նպատակը մարդու պարագայում վկայում է դետերմինիզմի դրսևորման միայն և միայն **գիտակցական** գործունեության արտահայտման մասին[12], այն է՝ մարդու վարքը բնութագրող ամենակարևոր երևույթը՝ նպատակադրությունը, չի կարող հանդես գալ գիտակցական գործունեությունից անկախ, քանի որ նպատակը գոյություն ունի միայն գիտակցության մեջ: Ակնհայտ է, որ առանց սուբյեկտիվ գործոնը հաշվի առնելու դժվար է խոսել բնության մեջ որևէ նպատակի գոյության մասին: Այդ դեպքում նպատակը (առիթը, իդեալը, նախագիծը և այլն) հանդես են գալիս որպես սուբյեկտիվ հավելումներ օբյեկտիվորեն գործող պատճառականության սկզբունքին, որոնք, սակայն, մարդու համար ձեռք են բերում ավելի մեծ նշանակություն, քան իրերի բնական՝ պատճառահետևանքային դետերմինացիան:

Միևնույն ժամանակ մեթոդաբանական առումով սխալ կլինի եզրակացնել, որ եթե մարդու գործունեությունը **գիտակցական-նպատակային** բնույթ ունի, ապա նույն տրամաբանությամբ են «առաջնորդվում» նաև մարդու կենսագործունեության ընթացքում ձևավորվող հասարակական ինստիտուտները: Վերջիններիս առավել բնորոշ է **նպատակահարմարությունը**, ինչը բացատրվում է, թերևս, նրանով, որ դրանք կոչված են ապահովելու, նախևառաջ, ողջ սոցիալական բարդ համակարգի **կայունությունը**: Դրա համար սոցիալական ինստիտուտների գործունեության մեջ առաջնահերթ հաշվի են առնվում ոչ թե հեռահար վերացական նպատակները, այլ այս պահին առկա սոցիալական պայմանները, որոնց շրջանակներում այս կամ այն փոփոխությունը դառնում է առավել **նպատակահարմար**:

Այսպիսով, կյանքի կազմակերպման հասարակական մակարդակում գործող նպատակադրության սկզբունքը, որն առհասարակ մարդու գործունեության գլխավոր բնութագրիչն է, տարածվում է ոչ թե սոցիալական ողջ համակարգի վրա, այլ հատուկ է անհատական՝ գիտակցական գործունեությանը, մինչդեռ հասարակական ինստիտուտները (պետություն, եկեղեցի, կրթություն և այլն) և սոցիալական կյանքի տարբեր՝ տնտեսական, քաղաքական և այլ ոլորտներ գործում են ավելի շուտ նպատակահարմարության սկզբունքի համաձայն: Եվ մեկ տարբերություն վերաբերում է նրան, որ եթե նպատակահարմարության հիմքում օբյեկտիվ իրականության օրենքները, օրինաչափությունները և պայմաններն են, ապա նպատակադրության հիմքում սուբյեկտիվ գործոններն են՝ ցանկությունը, կամքը և այլն:

Որքանով յուրաքանչյուր մարդ գործում է որոշակի սոցիալական միջավայրում, այնքանով նրա նպատակադրված գործունեության վրա

---

[12] Այդ մասին առավել մանրամասն տե՛ս **Հր. Շաքարյան**, նշվ. աշխ., էջ 95-96:

ազդում է կյանքի կազմակերպման սոցիոմշակութային որևէ մոդել: Սա հնարավորություն է տալիս պնդելու, որ նպատակներն առհասարակ դետերմինավորվում են մարդու ոչ միայն անհատական, այլև սոցիալական կեցությամբ, իսկ ավելի կոնկրետ՝ սոցիալ-մշակութային կեցությամբ: Դրանից բացի, հասարակությունը նաև խրախուսում է մարդու ակտիվ նպատակադրված գործունեությունը՝ առաջացնելով նոր պահանջմունքներ: Հետևաբար, մարդու նպատակադրված գործունեությունը ոչ այնքան նրա կենսաբանական հատկանիշներով պայմանավորված ինքնադրսևորման, որքան հասարակությունում մարդու գոյության ձև է: Նպատակն ինքնին վկայում է այն մասին, որ մարդ չի կարող բավարարվել միայն կենսաբանական պահանջմունքներով և գործառույթներով, ինչը ենթադրում է ոչ միայն հարմարվողական վարքի դրսևորում, այլև վերափոխիչ գործունեություն:

Այս տեսակետից ակնհայտ է դառնում, որ մարդու սոցիալական ակտիվության չափանիշը ոչ թե պարզապես նրա մասնակցությունն է հանրային հարաբերություններին (ինչը կարող է լինել նաև պարտադրանքի միջոցով), այլ ազատ նպատակադրությունը, երբ մարդ գործում է՝ ներդաշնակեցնելով անհատական և հասարակական նպատակները: Այլ կերպ ասած՝ մարդու պոտենցիալ սոցիալականությունը հենց նպատակադրված գործունեության միջոցով է դառնում ակտուալ սոցիալական ակտիվություն, որն ուղղված է գիտելիքների ու հմտությունների ձեռքբերմանը, ինքնադրսևորման միջոցով ինքնահաստատմանը և այլն:

Այն, որ մարդու նպատակադրված գործունեությունը դետերմինավորված է և՛ անհատական, և՛ սոցիալական երևույթներով, չի նշանակում, որ մարդն ազատ չէ նպատակ ձևակերպելու և այն իրականացնելու հարցում: Դեռ ավելին՝ ազատությունը նպատակադրության առաջնային բնութագրիչներից է, որի էությունը հետևյալն է. նպատակի անմիջական դետերմինանտներն են պահանջմունքները և ցանկությունը, որոնք, իրենց հերթին, ոչ այլ ինչ են, քան արտաքին գործոնների սուբյեկտիվացման արդյունք: Նպատակադրության մեջ ազատությունը դրսևորվում է այդ արտաքին գործոններից ընտրություն անելու և դրա շնորհիվ նպատակ ձևակերպելու մեջ: Կարելի է ասել, որ ինչպես նպատակադրված գործունեությունը ենթադրում է ազատություն, այնպես էլ ազատությունը միշտ նպատակադրված բնույթ ունի[13]: Դրա համար անհրաժեշտ է, որ ազատությունն ունենա ոչ թե դեկլարատիվ բնույթ, այլ գիտակցվի անհատի կողմից և ունենա սոցիալական երաշխիքներ: Այն գիտակցելու անհրաժեշտությունը կապված է **պատասխանատվության** հետ, քանի որ յուրաքանչյուր ազատ գործողություն ենթադրում է պատասխանատվություն, որն էլ հանդես է գալիս որպես ազա-

[13] Տե՛ս **Гавеля В. Л.** Целеполагание в структуре социальной деятельности человека. Волгоград: Издательство Волгоградского государственного университета, 1998:

տության շարունակություն[14]: Ինչպես անհրաժեշտության դեպքում պատճառը պայմանավորում է հետևանքի ոչ միայն գոյությունը, այլև էությունը, այդպես էլ նպատակադրված գործունեության ժամանակ ազատ ընտրությունը պարունակում է պատասխանատվություն, որն ուղիղ համեմատական է ազատության չափին. որքան շատ է մեկը, այնքան մեծ է մյուսը:

Պատասխանատվությունն առհասարակ մարդու նպատակադրված գործունեության անխզելի մասն է թեկուզ և այն պատճառով, որ հենց պատասխանատվությունն է ազատության իրացման թերևս միակ պայմանը, հնարավորությունը: Պատասխանատվությունն ուղղակիորեն կապված է նպատակադրված գործունեության հետ ոչ միայն ազատության միջոցով, այլև գիտակցության: «Սեփական ծննդի համար պատասխանատվություն կրելը, ըստ էության, գիտակից, ավելի ստույգ՝ ազատ-գիտակից էակի ծնունդն է: Հենց դա է մարդու երկրորդ ծնունդը, որի մասին խոսում էր Դեկարտը»[15]:

Եթե հաշվի առնենք, որ նպատակադրված գործունեությունը միշտ գիտակցական է՝ սկսած նպատակի գիտակցումից և վերջացրած դրա հետևանքներով, ապա կստանանք հետևյալ տեսքը ունեցող գործողությունների շղթա՝ գիտակցություն – ազատություն – նպատակ – պատասխանատվություն:

Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ մետաֆիզիկական ազատությունը և պատասխանատվությունը կոնկրետանում և «առարկայական» դրսևորում են ստանում մարդու գիտակցական-նպատակադրված գործունեության մեջ և դրա միջոցով:

Բանալի բառեր - *կեցություն, օրենք, նպատակ, նպատակահարմարություն, նպատակադրություն, գիտակցություն, ազատություն, պատասխանատվություն*

МОВСЕС ДЕМИРЧЯН – *Целеполагание и свобода как характеристики деятельности индивида.* – В статье утверждается, что на разные уровни жизни – неорганический, органический и социальный – влияют разные законы. Неорганическая жизнь протекает по закону необходимости, органическая –целесообразности, а социальная – целеполагания. Однако целеполагание как сознательная деятельность присуща только индивиду, что означает: в социальной жизни общественные институты и разные её сферы по-прежнему подчиняются закону целесообразности. Этим отчасти объясняется известная консервативность таких сфер социальной жизни, как экономика, политика, образование и т.д.

Целеполагание как самая характерная черта деятельности индивида тесно связана со свободой и ответственностью. Именно в целеполагании как сознательной деятельности индивида конкретизируется и находит своё предметное выражение их метафизическое содержание.

---

[14] Տե՛ս **Сартр Ж.-П**. Бытие и Ничто: опыт феноменологической онтологии. М.: "Республика", 2000, էջ 558:

[15] **Голенков С. И.** Ответственность как философская проблема // "Историческая ответственность: от мифов прошлого к стратегиям будущего": Сборник научных статей I международной научной конференции. Екатеринбург: "Деловая книга", 2016, с. 19.

Ключевые слова: *бытие, закон, цель, целесообразность, целеполагание, сознание, свобода, ответственность*

MOVSES DEMIRTSHYAN – *Goal-Setting and Freedom as Chatacteristics of Human Activity.* – The article states that processes at different levels of the organization of life – non-organic, organic and social, are influenced by different laws. Inorganic life proceeds according to the law of necessity, organic life – by the law of expediency, and social – by goal-setting. However, goal-setting as a conscious activity is inherent only to an individual, which means, that social institutions and various spheres of social life continue to "live" according to the law of expediency. This partly explains the well-known conservatism of such spheres of social life as economics, politics, education, etc. Goal-setting, as the most characteristic feature of an individual's activity, is closely related to such phenomena as freedom and responsibility. It is substantiated that in goal-setting, as in the conscious activity of an individual, the metaphysical content of freedom and responsibility is concretized and finds its "visible" expression.

Key words: *being, law, purpose, expediency, goal setting, consciousness, freedom, responsibility*

Ներկայացվել է՝ 29.04.2019
Գրախոսվել է՝ 06.05.2019
Ընդունվել է տպագրության՝ 04.06.2019